

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹՅԻՆ

Խուս-ձապոնական պատերազմը:—Բուզվելով վերլնտրուրիւնը:—Գրանսիական նացիոնալիստների մի խայտառակ բայլ պարտամենտական նիստում:—Խնարուկի դէպիր:—Կիլմիայի կարսդիկոսը Պողոսում:

Բալտեան նաւատորմիզը մեծ զգուշութիւններով անցաւ Դանսեմարկեան ջրերով. օգտուելով Մայր-Թագուհու հայրենակիցների բարեկամական աջակցութեամբ, և մտաւ Հիւսիսային կամ Գերմանական ծովը:Այդտեղ դժբախտաբար տեղի ունեցաւ մի թիւրիմացութիւն, որից քիչ մնաց խզուէին Անգլիայի և Ռուսաստանի յարաբերութիւնները: Բանը այն է որ այդ ծովի մէջ տեղում գոյութիւն ունի Դոգգերեան-Բանկեր անունով յայտնի մի ծանծաղուտ տարածութիւն, ուր վաղուց ի վեր ձկնորսութեամբ են պարապում Անգլիայի հուլ քաղաքի բազմաթիւ արդիւնաբերական ընկերութիւններ: Ռուսաց նաւատորմիզը հոկտեմբերի 8-ին գիշերը մօտենալով այդ տեղի բազմաթիւ ձկնորսական նաւերին և ճափոնական դաւադրութիւնից երկիւղ կրելով մի քառորդ ժամ ոմբակոծել է իրան երեացած ականանաւեր և ապա սրբնթաց դէն աճապարել, թողնելով բազմաթիւ վիրաւորներ, միքանի սպանուած անգլիացի ձկնորսներ և փչացած ձկնորսական նաւեր: Հասկանալի է թէ ինչ յուղում և զայրոյթ առաջացրեց այդ լուրը Անգլիայում: Ռուսաց կառավարութիւնը ցաւակցութիւն յայտնեց դժբախտ պատահարի առիթով և պատրաստութիւն ցոյց տուեց միջադդային քննիչ յանձնաժողովին յանձնել այդ թիւրիմացութիւնը պարզելու հարցը, միենոյն ժամանակ յօժարուեց վնասուածներին դրամական բաւարարութիւն տալ: Այդ խոհեմ ընթացքի շնորհիւ աշողուեց եւ ռոպական մի արիւնահեղ պատերազմի առաջն առնել: Պէտք խոստովանուել որ անգլօ-քրանսսական բարեկամութիւնը բարական օգնեց յիշած ընդհարման խաղաղ լուծման, Փոխ-ծովակալ Ռոժեստվինսկին շարունակեց իր ճանապարհը և հոկտեմբերի 19-ին ռուսաց նաւատորմիզը արդէն հասել էր սպասական նաւահանգիստ Վիկօն, իսկ 22-ին արդէն Զիբրալտարի

մուտքի առաջ մարոկկեան Տանժեր նաւահանգստում էր կանգնած: Այդ տեղից Բալտեան նաւատորմիղը բաժանուեց երկու խմբի: մէկը հակա-ծովակալ Ֆելկերզանի հրամանատարութեամբ ուղղուեց արևելք դէպի Միջերկրական ծովը և պէտք է անցնի Սուեցեան ջրանցքով: դրան արդէն միացած կը լինեն Սև ծովից դուրս եկած «Կամաւոր նաւատորմի» միբանի նաւեր, որոնք երևի կը վերածուեն ուղմական նաւերի հէնց որ կ'անցնեն Դարդանելը: Բալտեան նաւատորմի միւս խումբը հրամանատարութեամբ փոխ-ծովակալ Բոժեստվենսկու դիմեց արևմուտք՝ Ատլանտեան ովկիանոս: Նա պէտք է պատի Աֆրիկայի շուրջ, անցնի Բարեյոյսի հրուանդանի մօտով: Բաժանուած նաւատորմիղը պէտք է միանայ կրկին Մաղագասկար կղզու մօտ, օգատուելով Ֆրանսիայի բարեկամական «Հէղոքութիւնից»: Այսուհետև Բոժեստվենսկուն մնում է անցնել Հընդկաց Ովկիանոս, մտնել Չինական ծովի: Այդտեղ ճապոնսական Ֆորմոզա կղզու մօտերքում անշուշտ ճապոնացիները կը փորձնեն դիմադրութիւն ցոյց տալ նաւատորմի առաջնադաշտ: Տանժերից Աֆրիկայի շուրջ մինչև Վլադիվոստոկ համարւում է 13,700 մղն: ոռւսաց նաւատորմիղը 24 ժամուայ ընթացքում անում է մօտ 100 մղն: հետևապէս, 137 օրից յետոյ միայն նա կարող է տեղ հասնել:

Հարց է ծագում. կարմիր է արդեօք այդքան օր ևս դիմանալ Պորտ-Արտուրը: Բանը այն է, որ Բոժեստվենսկու նաւատորմի տեղից շարժուելու օրից ևեթ զօրավար նոգին աւելի ևս ուժեղացրեց պաշարողական գործունէութիւնը Պորտ-Արտուրի դէմ: Ճապոնիայից ուղարկուեցան լրացուցիչ զօրքեր և ամենամեծ թնդանօթներ գեներալ Սամահիտիի հրամանատարութեամբ: Ճապոնացիները գեռ հոկտեմբերի սկզբում դրաւել էին զատ-զատ ամրութիւնների կամ փորտերի առաջին գիծը, իսկ մինչև հոկտեմբերի 21-ը, Միկադոի ծննդեան օրը, նրանց աջողուել էր վերցնել երկրորդ գծից ևս հիւսիսային միքանի նշանաւոր փորտեր: Այսուհետև գրաւուած էին միքանի ամրութիւններ նաև արևելեան և արևմտեան մասերում: Այդ վերցը բած տեղերից աւելի ևս սաստիկ դարձաւ Պորտ-Արտուրի ուժբակութիւնը. վեասուեցան ոռւսաց միքանի ուղմանաւեր, պայթեց վառողատունը, հրդեհուեց զինարանը, էլ չենք ասում որ աւերակ էր դարձնել ամբողջ քաղաքը: Եւ չնայած այս բոլորին գեներալ Ստեսսելը չի վհատուում և քաջութեամբ շարունակում է պաշտպանել իրան յանձնուած բերդի իւրաբանչիւր թիզ հողը:

Այդ Պորտ-Արտուրեան դժողքից կարողացել է փախչել

«Ռաստորոպնը» ականանաւը, կարեոր հեռագրեր տանելով Զի-
ֆու: Համելով չինական այդ նաւահանգիստը նաւաստիները
իրանք պայթեցրին ականանաւը, որպէսզի նա չընկնի ճա-
պնացիների ձեռքը, որոնք կարող էին չյարգել այդ ականա-
նաւի չէզոք ջրեր մանելը, քանի որ ճապնացիների կարծիքով
ուսուները իսխատում են չէզոքութիւնը ռազմական նպատա-
կով մտնելով Զիֆու:

Մանջուրիայում երկու թշնամի բանակները կան-
գընած են Շախէ գետի ափերին և ամրացնում են ի-
րանց դիրքերը և աշխատում իրարից ծածուկ յետևներում
զօրքերի դասաւորման մէջ փոփոխութիւններ անել. իսկ
առաջապահ զօրքերի մէջ ամեն օր պատառում են ընդհարում-
ներ և փոխադարձ ուրակոծութիւններ: Նշանակելի է ճապնա-
կան բանակի աջ և ձախ թերերի առաջնադաշումը և տեսդեն-
ցիան մտնել ոռու բանակի թիկունքը երկու ծայրերից: Կուրո-
կին արդէն հասել է Ֆունչին, իսկ Օկուն գրաւել է Լին-
շիպու: Այդ երկու թերերն էլ իրանց ծայրերով ուրեմն
Շախէ գետի աջ ափից շարժուել են հիւսիս. մնում է Շախէ
գետի ձախ ափին գեռ նորդուն, որ երկի աւելի յարմարու-
թիւն կ'ունենայ տեղից շարժուելու, երբ կը սառչի ոռու բանա-
կից նրան բաժանող այդ գետը:

Միաժամանակ ոռուաց բանակի կազմակերպութեան մէջ
նշանաւոր փոփոխութիւններ առաջ եկան. ամբողջ զօրքը
բաժանուելու է 3 բանակների և, ինչպէս ճապնացիների մօտ
է, իւրաքանչիւրի համար արդէն նշանակուած են առանձին հը-
րամանատարներ. գեներալ Գրիպպենբերգ, գեներալ Լինեիչ
և գեներալ Կառուլբարս: Թէ ցամաքային և թէ ծովային զօրքի
ընդհանուր գլխաւոր հրամանատար է նշանակուած գեներալ
Կուրոպատկին, իսկ փոխարքայ Ալեքսէկը, կազմալուծելով իր
շտաբը, ուղևորուել է Պետերբուրգ:

Պատերազմով միջազգային հարցեր լուծելու բարբարոս
միջոցի դէմ թէն խօսում է կուլտուրական մարդկութիւ-
նը, բայց դեռ մեծ պետութիւններից ոչ մէկը չփորձեց կանգ-
նեցել ներկայ զարհութերի արիւնհեղութիւնը: Յոյս են դնում
Ռուզվելտի հրաւիրած միջազգային համաժողովի վրայ, որին
հաւանութիւն են տուել արդէն միքանի պետութիւններ:

Միացեալ-Նահանգների նախագահ վերընտրուեց ահա-
գին մեծամանութեամբ հանրապետական կուսակցութեան
թեկնածու Ռուզվելտը, որի հակառակորդն էր դեմոկրատիական
կուսակցութեան թեկնածու Պառկերը: Իսկապէս խոշոր տար-

բերութիւն չկայ այդ երկու կուսակցութիւնների ներքին քաղաքականութեան մէջ. եթէ Պառկերը կողմանակից է հովանաւորող մաքսերի վերացման, Ռուզվելտն էլ այդ մաքսերի անփոփոխութեան ջատագովը չէ, այլ աստիճանական թիթեացման տակտիկայի պաշտպան միայն։ Աւելի խոշոր է արտաքին քաղաքականութեան հայեացըների մէջ տարրերութիւնը. եռանդուն Ռուզվելտը եանկիական իմպերիալիզմի ջերմ կուսակից է և ցանկանում է որ Խաղաղ Ովկիանոսում Միացեալ-Նահանգները առաջնակարգ դեր կատարին, հետևապէս Ֆիլիպինեան կղզիներում գերակոռող ձայնը նա վերապահում է մնած հանրապետութեան կենտրոնական մարմին, իսկ Պառկերը չի ուզում այդչափ լայնածաւալ արտաքին գործունէութիւն և հետևաբար Ֆիլիպինեան կղզիները կառավարելու հարցում կը ցանկար որ տեղացիներին արուեր ներքին գործերում կատարեալ անկախութիւն։ Սակայն տասնեակ միլիոնների գուէարկութիւնն ցոյց տուաւ որ ներկայ պատմական մոմենտում հանկիների համակրանքը Ռուզվելտի ձգտումների կողմն է։ Մանր ճնշուած ազգութիւններին, որոնց յոյսը մեծ պետութիւնների միջամտութեան վրայ է, գուցէ աւելի ձեռնտու է Ռուզվելտի ընարութիւնը, քան Պառկերինը, որ աւելի քիչ է տրամադիր խառնուելու դրսի գործերի մէջ։

Այդպէս է ահա իրական կեանքի լոգիկան որ տարրեր է իդէօլոգների լոգիկայից։ Իւրաքանչիւր պատմական մոմենտ ունի իր հրամայողական պահանջները և հեռատես գործիչը գիտէ ճանաչել իրականը Փանտաստիկականից, չոկել քայլը գործնականում՝ իդէալական հեռանկարներից, որոնք աստղի նման նըրան կարող են միայն ուղղութիւն ցոյց տալ։ Միժոռես միթերել գործելով պարլամենտական ասպարիզում անհամեմատ աւելի բարիքներ են անում, քան այն խոռվկանները, որոնք չմասնակցելով «բուրժուական» պարլամենտի դործերում ուզում են մոգական գաւաղանի մի հարուածով իրականութեան մէջ մետամորֆոզներ ստեղծել, հին յունական ծես չամպինոնա-ի նման լուծումներ թելադրել... Անշուշտ նոյն ժողովը և նրա նման գործիչները տեղափոխուելով Թիւրքիա կամ այլ ուր կուրօրէն նոյն քեցեալտներով կամ շաբլոններով չէին դեկավարուելու, ինչպէս ներկայ Եւրոպայում, որովհետև տարրեր հասարակական-քաղաքական պայմանների անմիջական պահանջները կը լինէին բոլորովին այլ քան, օրինակ հէնց այն, ինչ եւրոպական կեանգում անվիճելի աքսիում է արդէն դառել...

Հետաքրքրական է թէ Փրանսիական ներքին կեանքում այժմ ո՞ր հարցն է հրամայողական պահանջ դառել: Ըսթեցողը, եթէ նա հետեւ է մեղ, կը հասկանայ որ եկեղեցու և պետութեան ապահարզանի խնդիրն է այժմ զբաղեցնում հանրապետութեան զաւակների մտքերը:

Բանալով Փրանսիական պարլամենտի աշնանային նստաշրջանը կոմի յայտնեց որ անհրաժեշտ է սկսել այդ դժուար ընթրումի իրագործումը: Եւ պարլամենտը ահազին մեծամասնութեամբ (88 ձ.) հոկտ. 9-ին (22) հաւանութիւն տուաւ այդ պատմական ամենամեծ քայլերից մէկին: Բնականաբար կղերականներն ու նացիօնալիստները պէտք է ամեն ճիգ թափէին տապալելու համար ներկայ արմատական մինիստրութիւնը: Եւ նրանց կարծես ժպտում էր այն հանգամանքը որ հանրապետականների մէջ անգամ կային շատ մարդիկ, որոնք վաղաժամ էին համարում կոնկրետատի խզումը:

Նացիօնալիստները իրանց յարձակումը ուղղեցին զինուորական մինիստր Անդրէի դէմ, գիտենալով որ հայրենիքի փառքի և պաշտպանութեան հարցը միշտ աւելի գիւրին է շահագործելու նացիօնալիստ Հիւր սկսեց մեղադրել գեներալ Անդրէին նրա մէջ իրրե թէ նրա օրօք օֆիցեների վրայ ծածուկ հսկողութիւն է նշանակուած, մատնութիւններ և կուսակցական հաւածանքներ են գործադրում զօրքի մէջ և այլն: Երբ կոմի և ժոռեսի ծերմ պաշտպանութիւնը անզօր դարձրեց նացիօնալիստների և այդ միջոցը, այն ժամանակ նրանք մտածեցին սկանդալով, խայտառակութեամբ դէթ մասնակի աշլողութիւն գտնել: Նացիօնալիստ Սեվեռոն յարձակուեց մինիստր Անդրէի վրայ և հարուածներ հասցրեց նրա երեսին: Այդ վայրագտգեղ վարմունքը ստիպեց միայն տատանուող հանրապետականներին աւելի ամուր բռնել ներկայ մինիստրութեան կողմը:

Անդրէն հրաժարուեց: Սեվեռոնը արտաքսուելով պալատից՝ աճապարեց փախչել Ֆրանսիայից, իսկ նացիօնալիստները բարոյական ահազին պարտութիւն կրեցին: Զինուորական մինիստր նշանակուեց հանրապետական Մորիս Բերտո:

Նեղ ազգամոլութիւնը ամեն տեղ բռնութեան արտայալուիչ: Նացիօնալիստական տգեղ կոիւներ մենք շատ ենք արձանագրել նոյն այս էջերում, երբ առիթ է եղել խօսելու աւտրօ-ունգարական գործերից: Այս անգամ գերմանական նացիօնալիստական անհամբերողութեան զոհերը եղան իտալացի ուսանողները Տիրոլի մայրաքաղաք Խոսքրուկում:

Տիրոլը հարաւից սահմանակից է իտալիայի Վենետիկեան:

գաւառին Տիրովի հարաւային մասերում բնականաբար իտալական ազգաբնակութիւնն է գերակշռում, իսկ մնացած մասերում գերմանականը. Վաղուց է որ Աւստրիայի իտալացիները ձգտում էին իտալական համալսարան ունենալ. սակայն հարսրութեան կառավարութիւնը չուզեց մի ամբողջ համալսարան տալ իտալացիներին, այն էլ նրանց ցանկացած Տրիեստ քաղաքում, ուր գերակշռող տարիը իտալացին է, այլ, մասնակի զիջում անելով, որոշեց լոկ իտալական իրաւաբանական մի ֆակուլտետ բանալ գերմանական ինսորուկ քաղաքում, ուր արդէն գոյութիւն ունի գերմանական համալսարան Բայց գերմանացիք չուզեցին միևնույն քաղաքում, թէկուղ համալսարանից տարբեր շնութեան մէջ, տեսնել իտալական ֆակուլտետ: Տեղի ունեցան փողոցային ցոյցեր, կոփառեր, միջամտեց զօրքը, եղան վիրաւորածներ և մի սպանուած. գերմանացի ազգասէրները ներս խուժեցին իտալական ֆակուլտետի շնութիւնը և ամեն բան ջարդուիը շուր արին: Եւ դեռ այդ բաւական չէ. մինիստր Կեօրքերին հայոյում են, որովհետու նա համարձակում է գերմանական տիրապետող գրութիւնը խախտել, ինչ-որ զիջումներ անելով Աւստրիայի սահմաններում ապրող միւս ազգութիւններին:

Այս, գեռ ևս երկար ժամանակ բռնի ոյժն է որոշելու իրաւունքը միջազգային կեանքում...

Լ. Ս.

Հոկտ. 8

Կիլիկիոյ ս. կաթողիկոսը Պոլսում.—Կայս. բարեհաճ Իրատէ մը արտօնած ըլլալով Կիլիկիոյ Վեհաշնորհ Կաթողիկոսին Պոլիս գալը, Ն. Ամենապատուութիւնը սեպտ. մէկին մեկնեցաւ Հալէպէն, և Մէրսին-Իսկէնտէրունի ճամբով սեպտ. տամսին հասւ Իզմիր, ուր արժանի ընդունելութեամբ մը պատուուեցաւ Իզմիր երկելիներէն բաղկացեալ պատզամաւորութիւն մը, ի գլուխ ունենալով Պատր. Փոխանորդ Տ. Դանիէլ վարդապետը, բարի գալուստ մաղթեց իրեն, և այդ առթիւ՝ ծանօթ հրապարակագիր Գէորգ էֆ. Պուլլի ուղերձ մը կարդաց Իզմիրի ամբողջ Հայ հասարակութեան կողմէ:

Ս. Կաթողիկոսին Պոլիս մուտքը, սեպտ. 14-ին, շատ սիրալիր ու համդիսաւոր եղաւ: Պատրիարքարանի կողմէ կարգուած մասնաւոր պատզամաւորութիւն մը, Գարամանեան էֆ.-ի մէկ շոգեմակոյկով մինչև Լոյտի Մարիա Թէրէզա շոգենաւը երթալով, բարի գալուստ մաղթեց և Ն. Ամենապատուութիւնը առաջնորդեց քարափ՝ ուր արդէն ստուար բազմութիւն մը հաւաքուած էր: Ն. Ամենապատուութիւնը իրեն հետեւորդ ունէր